ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

«Բյուջեներ քաղաքացիների համար». Խթանելով մասնակցային բյուջետավորումը Հայաստանում

Իրականացման ժամանակահատված: 08.12.2022 - 07.12.2026

ԱԼԳ երկրներ:

Armenia

ԵՄ ներդրում: € 700 000

Ընդհանուր բյուջե: € 777 778

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Armenian Lawyers' Association (ALA)

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ:

Նախագծի կայքէջ:

Նախագծի նկարագրություն:

Ծրագրի նպատակն է՝ նպաստել ՔՀԿ-ների կարողությունների զարգացմանը՝ նրանց տրամադրելով բյուջետային գործընթացների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն, հմտություններ, մարդկային և տեխնիկական ռեսուրսներ, ինչպես նաև բյուջետային քաղաքականությունների շուրջ բանավեճերում ներգրավվելու և ազդեցություն ունենալու գործիքներ: Ծրագրի շրջանակներում ՔՀԿ-ները կստանան ինչպես կարողությունների ուժեղացման, այնպես էլ մենթորական աջակցություն՝ զարգացնելով բյուջետային հայտերը և պետական ծախսերը վերլուծելու կարողությունները: Բացի այդ, նրանք կունենան կարողություններ իրենց անդամների և շահակիցների անունից իրականացնել շահերի պաշտպանություն՝ կենտրոնանալով թիրախային ոլորտների վրա և կատարել վերահսկողություն բյուջեի կատարողականի նկատմամբ: Արդյունքում, կբարձրանա հանրային հաշվետվողականությունը, կբարելավվի բյուջետային գործընթացի թափանցիկությունը, կապահովվի քաղաքացիների տեղեկացվածության և մասնակցության բարձրացումը բյուջետային գործընթացներում: Կոնսորցիումը միավորում է ՔՀԿ-ների զարգացման և ուսուցման մեթոդաբանության (ԻՀԱ), բյուջեի վերլուծության, պարզեցված բյուջեների և ֆինանսական թափանցիկության ոլորտներում (ՏՁՀԿ) հարուստ փորձը, տեղական և կենտրոնական իշխանությունների հետ արդյունավետ երկխոսության (բոլոր երեք գործընկերների) երկարամյա փորձը, ինչպես նաև Չեխիայի Հանրապետության ու ԵՄ բյուջետային գործընթացի մոնիթորինգի, քաղաքացիների բյուջեների և ֆինանսական թափանցիկության ոլորտում (ԱԳՈՐԱ) լավագույն փորձը:

Ակնկալվող արդյունքներ:

-Բյուջետային գործընթացին մասնակցելու համար ՔՀԿ-ների բարելավված կարողություններ,
-Քաղաքացիական հասարակության բարձրացված տեղեկացվածութուն բյուջետային գործընթացների և մուտքի կետերի վերաբերյալ,
-Բյուջեի վերլուծության, մոնիթորինգի և շահերի պաշտպանության համար մարդկային ռեսուրսների բարելավված հասանելիություն: